ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

«Տարրական դասարանների, երաժշտություն, կերպարվեստ, ֆիզկուլտուրա առարկաների» առարկայական մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի մայիսի 29-ին:
Նիստին մասնակցել են Տարրական դասարանների, երաժշտություն, կերպարվեստ և ֆիզկուլտուրա առարկաների առարկայական մասնախմբի բոլոր անդամները:

Օրակարգում՝

1. Առարկայական մասնախմբի նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Ս. Գորգինյան):
2. Նախորդ նիստի ժամանակ կայացված որոշումների կատարման մասին մասնախմբի ղեկավարի զեկուցում:
3. Հաշվետվությունների նոր ձևաչափի ներկայացում (զեկուցող՝ Ս. Գորգինյան):
4. Առարկայական ծրագրերի կատարողականի քննարկում (զեկուցող՝ Ս. Գորգինյան):
5. Թեմատիկ պլաններում օրվա դասի նպատակի և վերջնարդյունքի վերանայում (զեկուցող՝ Ս. Գորգինյան):
6. Լրացուցիչ քննությունների արդյունքներ և վերաքննության կազմակերպում (զեկուցող՝ Ս. Գորգինյան):
7. Այլընտրանքային հաղորդակցում առարկայի բնութագրիչների մշակում:

Լսեցին՝

1. «Տարրական դասարանների, երաժշտություն, կերպարվեստ, ֆիզկուլտուրա առարկաների» մասնախմբի ղեկավար Ս. Գորգինյանը ներկայացրեց նիստի օրակարգը բաղկացած 6 հարցից:

Լսեցին՝

2. Տարրական դասարանների մասնախմբի ղեկավար Ս. Գորգինյանը զեկուցեց նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին՝ նշելով, որ դրանք իրականացվել են սահմանված կարգով: Կատարվել է սովորողների ԱՈՒՊ-ների երկամսյա քննարկումները, լրացվել են արջձանագրության համապատասխան ձևերը: Քննարկման ընթացքում անդրադարձ է կատարվել արձանագրված ձեռքբերումներին և բացթողումներին, ինչպես նաև նախապես սահմանված նպատակների իրականացման աստիճանին՝ ապահովելով պատրաստվածություն ԱՈՒՊ-ների տարեվերջյան ամփոփման գործընթացին և ծնողների հետ հանդիպման և/կամ հետադարձ կապի տրամադրման արդյունավետ կազմակերպմանը: Միաժամանակ ներկայացվեցին իրականացված միջոցառումները և դրանց կրթադաստիարակչական արդյունքները.

- Մայիսի 6-ին 2^{Բ} դասարանի այցը Պլանետարիում նպաստել է սովորողների սոցիալականացմանը, ինչպես նաև միասին լսելու, դիտելու և արձագանքելու կարողությունների զարգացմանը:
- Մայիսի 12-ին 4^{Ա}, 4^{Բ}, 5^{Ա}, 5^{Գ} դասարանների մասնակցությամբ անցկացված սպորտլանդիան՝ «Հատուկ օլիմպիական խաղեր» խորագրով, նպաստել է սովորողների կամքի ուժի,

համագործակցային հմտությունների և միասնականության զարգացմանը՝ ընդգծելով սպորտային արժեքների և կարգապահության պահպանման կարևորությունը:

- Մայիսի 15-ին «Անվտանգ ամառային արձակուրդներ» թեմայով իրազեկման միջոցառումը բարձրացրել է սովորողների իրազեկվածությունը անվտանգ վարքագծի կանոնների վերաբերյալ՝ ամառային արձակուրդների ընթացքում հնարավոր ռիսկերի կանխարգելման նպատակով:
- Մայիսի 19-ին 1^{Ա} և 1^{Բ} դասարանների կողմից իրականացված բաց դասը նպաստել է ուսումնառության ընթացքում ձեռք բերված գիտելիքների ամփոփմանն ու ամրապնդմանը:

Լսեցին՝

3. Տարրական դասարանների մասնախմբի ղեկավար Ս. Գորգինյանը ներկայացրեց տնօրենի կողմից լրամշակված հաշվետվությունների ձևաչափը՝ ընդգծելով դրա կառուցվածքային առանձնահատկությունները, լրացման կարգը և ներկայացվող տեղեկատվության հիմնական պահանջները: Նա ուսուցիչներին տրամադրեց պարզաբանումներ հաշվետվության բաժինների բովանդակության, փաստերի և արդյունքների հիմնավորված ու ամբողջական ներկայացման վերաբերյալ: Նշվեց, որ նոր ձևաչափը հնարավորություն է տալիս առավել հստակ և համակարգված կերպով արտացոլել իրականացված աշխատանքները, ձեռքբերումները, առկա դժվարությունները և հետագա անելիքները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց հաշվետվությունները կազմել և ներկայացնել սահմանված ձևաչափին ու ժամկետներին համապատասխան:

Լսեցին՝

4. Տարրական դասարանների մասնախմբի ղեկավար Ս. Գորգինյանը ներկայացրեց առարկայական ծրագրերի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ նշելով, որ ուսումնական տարվա ընթացքում ծրագրային նյութն իրականացվել է ըստ թեմատիկ պլանների: Նշվեց, որ տոնական և ոչ աշխատանքային օրերի պատճառով առաջացած բացթողումները լրացվել են պահուստային ժամերի հաշվին, իսկ այն դասարաններում, որտեղ պահուստային ժամերը չեն բավարար՝ իրականացնել թեմաների խտացում՝ ապահովելով ուսումնական ծրագրի 100% կատարողական:

Լսեցին՝

5. Տարրական դասարանների մասնախմբի ղեկավար Ս. Գորգինյանը ներկայացրեց, որ տնօրեն Ա. Գարեգինյանի առաջարկությամբ թեմատիկ պլաններում նախատեսվում է վերանայել «Օրվա դասի նպատակ» և «Վերջնարդյունք» բաժինները՝ դրանց բովանդակության բարելավման և հստակեցման նպատակով:

Լսեցին՝

6. Տարրական դասարանների մասնախմբի ղեկավար Ս. Գորգինյանը տեղեկացրեց, որ սահմանված կարգով 4-րդ դասարանի սովորող Էլինա Սահակյանի համար կազմակերպվել են լրացուցիչ քննություններ բոլոր առարկաներից, սակայն վերջինս չի ներկայացել: Արդյունքում նախատեսվում է վերաքննության անցկացում՝ հունիսի 2–8-ն ընկած ժամանակահատվածում: Բոլոր

դասարանների լրացուցիչ քննական գրավոր աշխատանքների առաջադրանքները մշակված են եղել երեք տարբերակով՝ ապահովելով գնահատման բազմազանություն և օբյեկտիվություն:

Լսեցին՝

7. Տարրական դասարանների մասնախմբի ղեկավար Ս. Գորգինյանը հիշեցրեց, որ 2026 թվականի ապրիլի 30-ի մանկավարժական խորհրդի նիստով ընդունվել էր որոշում հունիս ամսին մեկնարկելու «Այլընտրանքային հաղորդակցում» առարկայի բնութագրիչների մշակման ուղղությամբ աշխատանքները, որից հետո դրանք պետք է ուղարկվեն ԿԶՆԱԿ հիմնադրամն նախնական դիտարկման: Նշեց, որ աշխատանքերն իրականացվելու են հիմնականում ծրագիրը մշակող մասնագետական խմբից հոգեբան Լ. Սեյրանյանի և այդ առարկան դասավանդող ուսուցիչների կողմից, սակայն մասնախմբի անդամներին հորդորեց անհրաժեշտության դեպքում աջակցել նրանց:

Որոշում է

1. Հաստատել մասնախմբի 2026 թվականի մայիսի 29-ի նիստի օրակարգը:
2. Նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն՝ արձանագրելով, որ իրականացվել են ԱՈՒՊ-ների երկամսյա քննարկումները, ապահովվել է պատրաստվածություն տարեվերջյան ամփոփման գործընթացին և ծնողների հետ համագործակցությանը, ինչպես նաև կազմակերպվել և իրականացվել են նախատեսված կրթադաստիարակչական միջոցառումները՝ ապահովելով սովորողների ակտիվ մասնակցությունն ու զարգացմանը նպաստող արդյունքներ:
3. Ի գիտություն ընդունել հաշվետվությունների նոր ձևաչափը և ապահովել դրանց կազմումը՝ սահմանված կառուցվածքին և ժամկետներին համապատասխան:
4. Առարկայական ծրագրերի կատարման ընթացքի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն՝ արձանագրելով, որ ծրագրային նյութը իրականացվել է ըստ թեմատիկ պլանների, տոնական և ոչ աշխատանքային օրերի պատճառով առաջացած բացթողումները լրացվել են պահուստային ժամերի հաշվին, իսկ անհրաժեշտության դեպքում թեմաների խտացման միջոցով ապահովվել է ուսումնական ծրագրերի տարեվերջյան 100% կատարողականը:
5. Հունիս ամսվա ընթացքում թեմատիկ պլաններում իրականացնել «Օրվա դասի նպատակ» և «Վերջնարդյունք» բաժինների վերանայում՝ դրանց հստակեցման և բարելավման նպատակով:
6. Էլինա Սահակյանի համար կազմակերպել վերաքննություն՝ հունիսի 2–8-ն ընկած ժամանակահատվածում: Ապահովել վերաքննությունների կազմակերպման համար անհրաժեշտ քննական առաջադրանքները՝ առնվազն երեք տարբերակով:
7. Աջակցել «Այլընտրանքային հաղորդակցում» առարկայի բնութագրիչների մշակման աշխատանքներին:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ **Ս. Գորգինյան**

Քարտուղար՝ **Մ. Հակոբջանյան**

03.06.2026